

**SEIU- ի սկզբունքները՝ COVID-19 պատվաստումների վերաբերյալ**

**12/18/20**

SEIU անդամներն էական նշանակության ոլորտի աշխատողներ են, ովքեր գտնվում են մեր համայնքներին մեծ վնաս հասցրած համավարակի դեմ պայքարի առաջնագծում: Մինչ մենք դիմակայում ենք եռակի ճգնաժամերի՝ համավարակի, տնտեսական փլուզման և շարունակական ռասայական անարդարության դեմ, պահանջում ենք, որ խոշոր ընկերությունները և ընտրված ղեկավարները ոչ միայն գովեն մեզ, այլև հարգեն, պաշտպանեն և վճարեն: Քանի որ մենք պայքարում ենք հանուն անվտանգության, արդարության և հավասարության՝ մեր, մեր ընտանիքների, այն մարդկանց, ում մասին մենք հոգ ենք տանում և ծառայություններ ենք մատուցում, և, ընդհանուր առմամբ, մեր համայնքների համար, մենք հանձառու ենք COVID19 պատվաստանյութի վերաբերյալ հետևյալ սկզբունքներին.

1. Պատվաստանյութերը հիվանդության տարածումը կանխելու ապացուցված տեխնոլոգիաներ են: COVID-ի պատվաստանյութը կարևոր գործիք է մեր ընտանիքները, մեզ և մեր համայնքները պաշտպանելու համար, մինչ մենք պայքարում ենք այս մահացու վիրուսին վերջ տալու համար: Մենք խրախուսում ենք SEIU անդամներին պատվաստանյութեր ստանալ:
2. Պատվաստանյութերի բաշխումը պետք է լինի արդար և թափանցիկ, և առաջնահերթություն պետք է տրվի վիրուսից առավել ծանր տուժած համայնքներին, ներառյալ՝ կարևոր ոլորտի աշխատողներին, ուղեկցող հիվանդություններ ունեցող անձանց և անհամաչափորեն ազդված սևամորթ համայնքներին:
3. Պատվաստանյութերը պետք է տրամադրվեն անվճար, իսկ աշխատողներին պետք է տրամադրվի վճարովի արձակուրդ, եթե պատվաստումների գործընթացը նրանցից պահանջում է բացակայել աշխատանքից:
4. Գործատուները չպետք է օգտագործեն պատվաստանյութերը՝ որպես աշխատողների անվտանգության և վարակների վերահսկման ընթացակարգերին փոխարինող միջոց, ինչպես նաև՝ անձնական պաշտպանական սարքավորումների հասանելիությունն ապահովելու համար:
5. Պատվաստանյութերի բաշխման ծրագրերը պետք է ներառեն կրթական և



իրագրելի ման այնպիսի գործողություններ, որոնք խորապես և իմաստավից ներգրավում են կարևոր ոլորտի աշխատողներին և մեր համայնքներին:

6. Տեղեկատվության և բաշխման ծրագրերը պետք է ընդունեն կառուցվածքային ռասիզմի ազդեցությունը՝ սևամորթ և թխամորթ համայնքներում տրավմաներ առաջացնելու և պատվաստումների նկատմամբ անվստահության մակարդակի բարձրացման հարցում:
7. Համընդհանուր պատվաստումը խրախուսելու լավագույն մոտեցումը կրթության և իրագրելի միջոցով է, այլ ոչ թե՝ պատվաստումը պարտադիր դարձնելու միջոցով:

